ԱՐՑԱԽԻ ԽՆԴԻՐԸ ՎՐԱՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԸՆԿԱԼՄԱՄԲ (ԸՍՏ 1999-2009 ԹԹ. ՎՐԱՑԱԼԵԶՈՒ ՏՊԱԳԻՐ ՄԱՄՈՒԼԻ ՆՅՈՒԹԵՐԻ) մաս I

Վահե Դավիթի Սարգսյան
ՀՀ ԳԱԱ ՊԻ գիտաշխատող,
պատմության գիտությունների թեկնածու

Աշխարհի մի շարք պետությունների շարքում հարևան Վրաստանը ևս նախկին ԼՂԻՄ-ը և վերջինիս հարակից ազատագրված տարածքները (ներկայիս Արցախի Հանրապետությունը) համարում է Ադրբեջանի մաս կամ, միջազգային տերմինաբանությամբ ասված, պաշտոնապես ճանաչում է Ադրբեջանի Հանրապետության «տարածքային ամբողջականությունը» և այդ պետության տիտղոսը այն տարածքների վրա, որոնք ստալինյան որոշումներով ներառված են եղել Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմում:

Անդամակցելով մի շարք միջազգային կառույցների (ՄԱԿ, ԵԽ, ԵԱՀԿ և այլն) և հենվելով բազմաթիվ միջազգային փաստաթղթերի վրա (Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդաժողով, Եզրափակիչ ակտ, Հելսինկի, 1975 թ. և այլն)[1]՝ Վրաստանը բազմիցս բարձրաձայնել է պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքի գերակայության մասին՝ շրջանցելով նույն փաստաթղթերում ամրագրված ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքների մասին դրույթները:

Պարզորոշ է, որ Վրաստանի վերոնշյալ դիրքորոշման հիմքում ընկած է քաղաքական գործոնը՝ անվտանգային, տնտեսական, ռազմական, տարանցիկ, ռազմավարական, աշխարհաքաղաքական և այլ բաղադրիչներով հանդերձ: Դա ենթադրում է, որ Վրաստանի՝ Արցախի հարցում ձևավորված դիրքորոշումը պայմանավորված է հիմնական մի քանի գործոններով, որոնց շարքում առանցքային տեղ ունեն Ադրբեջանի և Թուրքիայի հետ խորացող բազմակողմ և բազմաբովանդակ հարաբերությունները, ՀՀ-ՌԴ զամավարական հարաբերությունների առկայության պայմաններում Վրաստանի և ՌԴ-ի միջև առկա միջպետական սառը հարաբերությունները, Վրաստանի և ՀՀ-ի՝ աշխարհաքաղաքական երկու հակադիր բևեռներ (արևմուտք (ՀԱԴ, ԵՄ) և ՌԴ (ԱՊՀ, ԵԱՏՄ, ՀԱՊԿ)) ձգտման կամ դրանցում արդեն ընդգրկված լինելու իրողությունը և այլն: Այս շարքում հատուկ տեղ են գրավում Վրաստանի ամենացավոտ հիմնահարցերից երկուսը՝ աբխազական և հարավօսական խնդիրները:

[1] ԵԱՀԿ Բաքվի գրասենյակը փակվել է 2014թ., Թբիլիսի գրասենյակը՝ 2008թ.: Ադրբեջանի կողմից ԵԱՀԿ երևանյան գրասենյակի գործունեության շարունակմանը դեմ հանդես գալու պատճառով (կոնսենսուսային սկզբունքի կիրառում) 2017թ. փակվեց նաև Երևանի գրասենյակը՝ ԵԱՀԿ վերջին գրասենյակը տարածաշրջանում:

1990-ական թթ. տեղի ունեցած արյունալի պատերազմները և, ի վերջո, խորհրդային շրջանում ձևավորված Աբխազական ԻՀ-ի Հարավային Օսեթիայի ԻՄ-ի առանձնանալը Վրաստանից, սկսած 2008 թ.՝ նաև նշյալ ինքնահռչակ պետությունների միջազգային ճանաչման գործընթացի սկզբնավորման փաստը, բնականաբար, մեծապես ազդելու են Վրաստանի՝ այլ ինքնորոշված ժողովուրդների կամ պետությունների հանդեպ ունենալ հատուկ սուբյեկտիվ վերաբերմունք: Այդ է նաև պատճառը, որ Վրաստանի տարբեր ժամանակների իշխանությունները բազմիցս հայտարարել են, որ «Վրաստանը և Ադրբեջանն ունեն նույնատիպ խնդիրներ», այն է՝ «բզկտված են երկու երկրների տարածքների շուրջ 20 %-ը», «և' Վրաստանում, և' Ադրբեջանում հարյուր հազարավոր մարդիկ դարձել են փախստականներ», «հարևան պետությունները ուղղորդել են իրենց կազմում ապրող այլազգիներին, ովքեր դուրս են եկել պետության դեմ և օկուպացրել տարածքներ» և այլն: Վրաստանի իշխանությունները նմանաբովանդակ հայտարարություններ հնչեցրել են թե' Ադրբեջան-Վրաստան միջպետական բարձրաստիճան այցերի, թե' այլ ձևաչափով տեղի ունեցած հանդիպումների, թե' միջազգային հարթակներում՝ զանազան առիթներով:

Վրաստանում արցախյան հիմնահարցի նկատմամբ ձևավորվող դիրքորոշումների վրա իր հետքն է թողնում նաև մասամբ ճանաչված Աբխազիայի և Հարավային Օսեթիայի Հանրապետությունների և Արցախի Հանրապետության միջև ձևավորվող միջպետական ջերմ և բազմակողմանի խորացող կապեր[1]: Նշյալ հանրապետությունների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը (փոխադարձ ճանաչումը), բարձրագույն ղեկավարության և առանձին գերատեսչությունների ղեկավարների փոխադարձ այցերը[2], պետական տոներին և այլ առիթներով բարձրագույն ղեկավարության կողմից հղվող շնորհավորական

---

[1] Տես **Կարապետյան Ռ.**, Արցախի հանրապետության արտաքին քաղաքականության հիմնական ուղենիշները. միջազգային ճանաչում եվ ապաշրջափակում, Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները: Միջազգային երիտասարդական 2-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու, 2017, 2, էջ 126:

[2]Տես **ԼՂՀ ԱԺ նախագահը Աբխազիայում է**, 25.09.2014թ., https://mediamax.am/am/news/karabakh/11714/, դիտվել է 12 մարտի, 2019թ., տես նաև **Արցախի Նախագահն հանդիպել է Աբխազիայի, Հարավային Օսիայի եւ Մերձդնեստրի պատվիրակությունների հետ**, 02.09.2016թ., https://armenpress.am/arm/news/859142/arcakhi-nakhagahn-handipel-e-abkhaziayi-haravayin-osiayi.html, դիտվել է 12 մարտի 2019թ., տես նաև **Արցախի արտաքին գործերի նախարարի և Աբխազիայի արտաքին գործերի նախարարի հանդիպումը**, 28.08.2017, http://www.nkr.am/hy/news/2017-08-28/950, դիտվել է 12 մարտի, 2019թ.: Տես նաև **Արցախի Հանրապետության ԱԳ նախարարի հանդիպումը Աբխազիայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ**, 02.10.2018, http://www.nkr.am/hy/news/2018-10-02/1123/?fbclid=IwAR340UmK11O1FhBL8i6YXTvX2dGxeDg-GPnMaW5tv-wwxdCUP2lK_F4D_tA, դիտվել է 12 մարտի, 2019թ.:

ուղերձները[1], կնքվող միջպետական պայմանագրերը, համապետական ընտրություններին դիտորդական պատվիրակությունների փոխադարձ ներկայությունը[2], սահմանված ազատ այցագրային ռեժիմը[3], միջազգային մրցաշարերում և տարբեր այլ ձևաչափերով լայն համագործակցության իրողությունը մշտապես զայրացրել են Վրաստանին և վերջինիս իշխանությունների մոտ կոշտ արձագանքների տեղիք տվել:

Վրաստանը մշտապես հայտարարել է նաև, որ պաշտոնապես չի ճանաչում Արցախի Հանրապետությունում այս ընթացքում տեղի ունեցած համապետական (նախագահական, խորհրդարանական, սահմանադրական հանրաքվեներ (2006թ., 2017թ.)) բոլոր ընտրությունները: Այդ մասին երկրի բարձրագույն ղեկավարությունը հայտարարել է Արցախում կայացած ընտրություններից անմիջապես հետո: Վրաստանը միջազգային հարթակներում գրեթե մշտապես կողմ է քվեարկել նաև Ադրբեջանի ներկայացրած հակահայկական բանաձևերին:

Բացի վերոնշյալ պաշտոնական դիրքորոշումներից, բնականաբար, արցախյան հիմնահարցի նկատմամբ կարծիք ունեն նաև Վրաստանի հասարակական տարբեր շերտերի ներկայացուցիչները՝ հասարակական-քաղաքական գործիչներ, մտավորականներ, հասարակագետներ, հրապարակախոսներ, փորձագետներ, կոնֆլիկտաբաններ և հանրային կարծիքի վրա ազդող այլ շրջանակներ, որոնք նույնպես մամուլի միջոցով երբեմն արտահայտել են իրենց մտքերը և տեսակետները քննարկվող խնդրի մասին:

Հայ հանրությունը արցախյան հիմնահարցի մասին վրացական պաշտոնական դիրքորոշումներին կամ առանձին այլ կարծիքների ծանոթացել է հիմնականում կամ պաշտոնական լրահոսի կցկտուր թարգմանություններից, կամ վրացական ռուսալեզու կայքերից, որոնցով, բնականաբար, անհնար է կազմել ամբողջական խճանկար: Փաստենք, որ վրացալեզու և' կայքերի, և', հատկապես, տպագիր մամուլի էջերում զետեղված և քննվող խնդրի տեսանկյունից մեծ հետաքրքրություն

---

[1] Բակո Սահակյանը շնորհավորել է Հարավային Օսիայի նախագահին Անկախության օրվա առթիվ, 20.09.2018, http://www.panarmenian.net/arm/news/260272/, դիտվել է 17 մարտի, 2019թ.:

[2] Вице-спикер парламента Абхазии: Выборы в НКР соответствуют всем международным стандартам, 23.05.2010, http://www.panarmenian.net/rus/world/news/49007/, դիտվել է 17 մարտի, 2019թ.:

[3] Абхазия вводит безвизовый режим с Нагорно-Карабахской Республикой: В Баку беспокоятся, 24.02.2016, http://www.panarmenian.net/rus/news/206755/, դիտվել է 17 մարտի, 2019թ.:

ներկայացնող բազմաթիվ և բազմապիսի նյութեր այդպես էլ հասու չեն դարձել հայկական շահագրգիռ շրջանակներին:

Ներկայացվող աշխատանքում բերված են բացառապես վրացալեզու տպագիր մամուլում տեղ գտած բոլոր այն կարծիքները, պաշտոնական և ոչ պաշտոնական դիրքորոշումները, մտքերն ու քննարկումները, որոնք արտահայտել են վրացի գործիչները արցախյան հիմնահարցի առնչությամբ: Աշխատանքում ներկայացված նյութերը վրացալեզու տպագիր մամուլում հրապարակվել են 1999-2009 թվականներին: Հասարակական բոլոր շրջանակների տրամադրությունները լսելի դարձնելու համար աշխատանքում ներկայացված են Վրաստանում նշյալ տարիներին լույս տեսած և' ընդդիմադիր, և' իշխանամետ, և' համեմատաբար չեզոք դիքերից հանդես եկող մամուլի նյութերը, որոնք սույն աշխատանքում դասավորված են ըստ հրատարակությունների ժամանակագրության:

Գաղտնիք չէ, որ ՀՀ-Վրաստան հարաբերություններում կուտակված հսկայածավալ խնդիրների լուծման համար անհրաժեշտ է լարված կերպով աշխատել նաև վրացական տարբեր շրջանակների հետ: Մինչ օրս խորացող շատ խնդիրներ ապացույցն են այն իրողության, որ հայկական կողմը բավարար քայլեր չի ձեռնարկել այդ ուղղությամբ, իսկ դրա պատճառը եղել է նաև այն, որ հայկական շրջանակները բավարար իրազեկվածություն չեն ունեցել վրացական պատկան շրջանակների մասին: Ուստի, սույն աշխատանքը խորքի մեջ նպատակ ունի նաև հայ հանրությանն առավել մոտիկից ծանոթացնելու իր հարևան ժողովրդի տարբեր շերտերի մոտ հայկական ազգային խնդիրների, հետևաբար նաև՝ հայ ժողովրդի հանդեպ ձևավորված կարծրատիպերի հետ: Ի վերջո՝ պետական-քաղաքական դիրքորոշումը կամ դիվանագիտական հողի վրա արված քայլերը մի բան են, իսկ հանրության տարբեր շրջանակների մոտ ձևավորված մտածողությունը և դրանից բխող դիրքորոշումները բոլորովին այլ բանի մասին են խոսում:

Եզրակացությունները և անհրաժեշտ հետևությունները զետեղված են աշխատանքի երկրորդ մասի ավարտին:

***

«Խաղաղության, ժողովրդավարության և զարգացման կովկասյան ինստիտուտի» տնօրեն, քաղաքագետ Գիա Նոդիան, խոսելով ռուս-վրացական հարաբերությունների և տարածաշրջանային զարգացումների մասին, փաստում է. «Արևմուտքը մեծ ակտիվություն է դրսևորում ղարաբաղյան բախումը կարգավորելու համար, որը բացարձակապես չի ցանկանում Մոսկվան, քանի որ նրա համար Ղարաբաղը քաղաքական կապիտալ է և լծակ, շնորհիվ որի և «ձեռքում պահած» ունի Հայաստանը: Մինչև չկարգավորվի Ղարաբաղի բախումը, արևմուտքի կողմից մեր

տարածաշրջանը կդիտվի որպես ապակայուն երկրամաս»[1]: Զարգացնելով իր միտքը և ՀՀ-ԱՀ հարաբերությունների և Վրաստանին հարևան այդ երկրների ներքին զարգացումների մասին՝ Գ. Նոդիան նշում է. «Բայց նշանակալից է այն հանգամանքը, որ արևմուտքի մշակած հաշտարարական ծրագրի իրականացմանը դեմ է հենց Ադրբեջանը, քանի որ, ինչպես նշում են, նախ այդ ծրագիրը մշակված է Հայաստանի շահերին համապատասխան, և, բացի այդ, ԱՄՆ-ի նախընտրական կամպանիան թափ է հավաքում, ակտիվացել է ԱՄՆի հայկական լոբբին և մինչ ընտրությունների ավարտը Հայաստանի դիրքորոշումը կդառնա առավել հստակ: Դա է պատճառը, որ Բաքվում շատերն են համարում, որ Ադրբեջանը պետք է առնվազն մոտ մեկ տարի դիմանա: Վաշինգտոնում նոր վարչակազմի ձևավորումից հետո կփոխվի ԱՄՆ-ի դիրքորոշումը՝ դառնալով էլ ավելի պրոադրբեջանական»[2]: Գ. Նոդիան այնուհետև խոսում է ԱՄՆ հայկական լոբբիի կատարած աշխատանքների, ՀՀ և ԱՀ նախագահների՝ սեփական երկրնում ունեցած դիրքերի և արցախյան հարցում ունեցած դիրքորոշումների մասին՝ եզրակացնելով, որ Բաքվում ընդդիմադիր ուժերի հանրահավաքները, Հ. Ալիևի վատառողջ վիճակը, ՀՀ վարչապետ Վ. Սարգսյանի սպանությունը և այլ իրողություններ առավել անորոշ են դարձրել Ղարաբաղի խնդրի կարգավորման հեռանկարը:

«Ռեզոնանսի» թերթի հոդվածագիր Գիորգի Կալանդաձեն իր ծավալուն ակնարկում անդրադառնալով ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի՝ Վրաստան կատարած այցին և պաշտոնական հանդիպումներում տեղի ունեցած ուշագրավ հայտարարություններին, տարածաշրջանային զարգացումների համապատկերի վրա անդրադառնում է նաև ՀՀ ներքին զարգացումներին, Ռուսաստան-տարածաշրջան հարաբերություններին, ՀՀ խորհրդարանում տեղի ունեցած 1999 թ. հոկտեմբերյան մեծ ողբերգությանը և փաստում, որ Մոսկվայում վերջին շրջանում մեծ վրդովմունքով են հետևում ՀՀ-ՆԱՏՕ հարաբերությունների զարգացմանը, որի շրջանակներում ՀՀ-ն, նպատակ ունենալով յուրացնել Ղարաբաղը, ամեն կերպ աջակցում է ազգերի ինքնորոշման գաղափարին: «Ընդհանրապես, Մոսկվան փորձում է Քոչարյանին լիովին զրկել քաղաքական մանևրի դաշտից և դարձնել իր խաղատիկնիկը: Հայերին մտահոգում է այն հանգամանքը, որ, ճակատագրի բերումով կախված լինելով ՌԴ-ից, Մոսկվան կարող է մշակել ղարաբաղյան հակամարտության ծրագիր՝ հօգուտ Ադրբեջանի (դա չի բացառվում, քանի որ Ադրբեջանն աշխարհաքաղաքական տեսանկյունից ավելի կարևոր է, քան

[1] **«კვირის პალიტრა»** («Կվիռիս պալիտռա» («Շաբաթվա ներկապնակ»)), N 48, 1999. Այս և հետագա հղումներում վրացալեզու թերթերի անունները բերված են վրացերենով, իսկ փակագծերում՝ հայատառ և թարգմանաբար:

[2] Տես նույն տեղում:

Հայաստանը): Նկատի ունենալով այդ, Քոչարյանն ամեն գնով ձգտում է դուրս գալ ռուսների սարքած քաղաքական թակարդից»:

Առավել խտացնելով Ռուսաստանի քաղաքական ուղեգծի բացասական գույները՝ Գ. Կալանդաձեն այստեղ խիստ կարևորում է ՀՀ-Վրաստան համագործակցությունը, մատնանշում հարևանների՝ քաղաքական, քարոզչական, ռազմաստրատեգիական, էներգետիկ և այլ ոլորտներում ունեցած փոխադարձ շահերը[1]:

Թեև անմիջական կերպով չի խոսվում Արցախի մասին, այդուհանդերձ, վրացալեզու «Դիլիս գազեթի» թերթում անդրադարձ կա Վրաստանի և Ադրբեջանի՝ որպես նույն ճակատագրին արժանացած հարևան երկրների, ճակատագրերի մասին: Թերթը փաստում է, որ երկու երկրներն էլ կորցրել են սեփական տարածքների մոտ 20%-ը և ունեն փախստականների մոտ կես միլիոնանոց բանակ: Թերթը ցիտում է նաև տվյալ շրջանում Վրաստան այցելած Հ. Ալիևին, ով մի քանի անգամ շեշտել է երկու երկրների ճակատագրերի նույնականության և տարածքային ամբողջականության վերականգնման անհրաժեշտության մասին[2]:

«Ռեզոնանսի» թերթի մեկ այլ համարում նույն հոդվածագիր Գ. Կալանդաձեն ծավալուն անդրադարձ է կատարում տարածաշրջանային զարգացումներին և այդ համապատկերին Ջավախքում տեղի ունեցող իրադարձություններին, տեղի հասարակական-քաղաքական կազմակերպությունների գործունեությանը, խիստ բացասական երանգավորումներով խոսում Ջավախքում առկա, իր ենթադրությամբ, այսպես կոչված, «անջատողական» տրամադրությունների մասին և այլն: Հիշատակելով նաև ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի՝ Վրաստան կատարած այցը և վերջինիս՝ տարածաշրջանային միասնական անվտանգության համակարգ հիմնելու մասին հայտարարությունը, հոդվածագիրը փաստում է. «Անվտանգության նման համակարգ հիմնելը և մանավանդ դրան Երևանի մասնակցությունը անհնարին է, քանի դեռ չի կարգավորվել Ղարաբաղի հիմնախնդիրը»[3]:

Բավական հետաքրքրական մի փաստի մասին է խոսում «Ախալի 7 դղե» թերթը, որը մեջբերում է Աջարիայի ԻՀ նախագահ Ա. Աբաշիձեի հեռուստաելույթից որոշ հատվածներ: Հրապարակման համաձայն՝ Ա. Աբաշիձեն հայտարարել է, որ հայ-ադրբեջանական պատերազմում ինքն օգնել է Հայաստանին՝ պատերազմական գործողությունների ժամանակ շրջափակման մեջ հայտնված Հայաստանին փոխանցելով մթերք և վառելանյութ: Ա. Աբաշիձեն նաև հայտնել է, որ, իր որակմամբ, «անսիրտ» (վրաց.՝ «უგულო») Շևարդնաձեն չընդունեց իր առաջարկությունները, և

---

[1] **«რეზონანსი»** («Ռեզոնանսի» («Ռեզոնանս»)), N 85, 2000.

[2] **«დილის გაზეთი»** («Դիլիս գազեթի» («Առավոտյան թերթ»)), N 63, 2000.

[3] **«რეზონანსი»** («Ռեզոնանսի» («Ռեզոնանս»)), N 92, 2000.

Հայաստանի համար Թուրքիայից Փոթիի նավահանգիստ հասցրած սառեցրած ապրանքները, Վրաստանի տարածքով փոխադրման արգելքի հանդիպելով, մնացին տեղում: Թերթի կարծիքով Աբաշիձեն դրանով ուզեց ապացուցել իր անսահման բարությունը՝ ևս մի ավելորդ անգամ նշելով, թե ինչպես օգնեց Հայաստանին, այն Հայաստանին, որը հանդիսանում է իր աչալուրջ թշնամու՝ Զ. Ժվանիայի էթնիկական հայրենիքը[1]:

Անդրադառնալով Է. Շևարդնաձեի՝ ՀՀ կատարած այցին և վերլուծելով տարածաշրջանային զարգացումները՝ «Դիլիս գազեթի» թերթի հոդվածագիր Մալխազ Չաչավան շոշափում է նաև արցախյան խնդիրը: Նկարագրելով ՀՀ ներքին իրադրությունը՝ Մ. Չաչավան նշում է, որ ՀՀ-ն գտնվում է շրջափակման մեջ, բնակչությունը վերջին տարիներին կրճատվել է երկու անգամ՝ դառնալով երկու միլիոն: «Դա, իրոք, աղետ է, չնայած հայերն այնքան էլ չեն տրտնջում, հույսով են լցված դեպի ապագան և Ղարաբաղում տարած հաղթանակով չեն սահմանափակվում»[2]: Ըստ հոդվածագրի՝ Է. Շևարդնաձեն տանտերերին, այսինքն՝ հայերին, հուշել է, որ պետք չէ մնալ մեկուսացման մեջ, պետք է համաձայնվել փոխզիջման գնալ Ադրբեջանի հետ, կարգավորել հարաբերությունները Թուրքիայի հետ, և այդ դեպքում հնարավոր կլինի մասնակցել տարածաշրջանային նախագծերի իրականացմանը: Շարունակելով զարգացնել արցախյան խնդրին առնչվող իր միտքը՝ վրացի հեղինակը փաստում է հետևյալը. «Բայց եթե Հայաստանը շարունակի համառորեն հրաժարվել Ղարաբաղի խնդրի հետ կապված ամեն տեսակի փոխզիջումներից, այդ երկիրը ուղղակիորեն կդատարկվի, վերջնականապես կքայքայվի, և, բացի Ռուսաստանի 102-րդ ռազմաբազայից, ուրիշ ոչինչ չի մնա այնտեղ»[3]:

«Դանդաղ գործող ական՝ 5-րդ շարասյուն» վերտառությամբ հոդվածում «Մթավառի գազեթի» պարբերականի հոդվածագիր Իրակլի Ջոխաձեն ծավալուն անդրադարձ է կատարում Ջավախքում ստեղծված իրադրությանը, այնտեղ գործող կազմակերպություններին, հայության շրջանում առկա տրամադրություններին և այլն: Բավականին մանրակրկիտ կերպով անդրադառնալով Վրաստանում և, մասնավորապես, Ջավախքում հայերի թվի տոկոսային հարաբերակցությանը, տարբեր տարիների ժողովրդագրական ցուցանիշներին, հոդվածագիրը ջավախահայության՝ հանուն սեփական իրավունքների պայքարը որակում է Ռուսաստանի կողմից աջակցություն ստացող անջատողական կամ զավթողական ձգտումներ, մի իրողություն, որը, ըստ Ի. Ջոխաձեի, իր անմիջական ազդեցությունն ունեցավ նաև Ղարաբաղի իրադարձությունների վրա: «1985-1991 թթ. Ղարաբաղի հայտնի իրադարձությունները կատալիզատորի դեր

---

[1] **«ახალი 7 დღე»** («Ախալի 7 դղե» («Նոր 7 օր»)), N 29, 2001.

[2] **«დილის გაზეთი»** («Դիլիս գազեթի» («Առավոտյան թերթ»)), N 235, 2001.

[3] Տես նույն տեղում:

խաղացին և արագացրին Ջավախեթիում հայտնի հայկական «Ջավախք» կազմակերպության հիմնումը: Ղարաբաղում բախման ժամանակ Ջավախեթիից պատերազմ գնացած հայերն ունեին իրենց խմբավորումը, որտեղ համախմբված էին միայն ջավախահայերը: Այս պատճառով Ջավախեթիում մեծ քանակությամբ զենք և մարտական պատրաստության նյութեր կուտակվեցին», - փաստում է հոդվածագիրը[1]: Շարունակելով զարգացնել «ջավախքյան անջատողականության» թեման՝ Ի. Ջոխաձեն խոսում է նաև Ջավախքում հիմնված մեկ այլ կազմակերպության՝ «Փարվանայի» մասին, որը ևս, ըստ հոդվածագրի, զինվելով Ախալքալաքում տեղակայված ռուսական ռազմակայանից, ոչ վաղ անցյալում զենք է մատակարարել Ղարաբաղի պատերազմին[2]: Վրացի հեղինակը, փաստորեն, Ջավախքում տեղի ունեցող զարգացումները որակելով որպես անջատողականություն կամ զավթողականություն և դրանք անմիջականորեն կապելով արցախյան զարգացումների հետ, խորքի մեջ, անուղղակիորեն Արցախում տեղի ունեցած ազգային-ազատագրական պայքարը ևս դիտարկում է այդ նույն հարթության մեջ:

Գրեթե նույն միտքն է զարգացնում նաև «Ռեզոնանսի» թերթի հոդվածագիր-պատմաբան Բորիս Բոխուան, ով, ծավալուն անդրադարձ կատարելով 1918 թ. հայ-վրացական պատերազմին և, իր եզրույթով և որակմամբ, «դաշնակցական» Հայաստանի «զավթողական քաղաքականությանը», Լոռվա և Ջավախքի հանդեպ «անարդարացի հավակնություններին», դառնությամբ փաստում է, որ, իբր, մեր օրերում ևս Հ.Յ.Դաշնակցությունն իր գործունեությունն է ծավալում հայաբնակ Ջավախքում՝ այնտեղ տարածելով կեղծ քարտեզներ, հակավրացական գրականություն, իսկ Ախալքալաքի մի քանի գյուղերի մարտիկներ ռազմական ուսուցում անցկացնելով՝ մասնակցել են Ղարաբաղյան պատերազմին[3]:

«Ախալի Էռա» թերթը արցախյան պատերազմում հայության տարած հաղթանակը վերագրում է ռուսներին: Հոդվածագիր Դիտո Չուբինիձեն, ծավալուն անդրադարձ կատարելով աշխարհաքաղաքական զարգացումներին, ԱՄՆ-Իրան սրված հարաբերություններին, ՀՀ-ին անվանում է «Ռուսաստանի կովկասյան պոչ» և փաստում, որ ՀՀ-ն, վարելով իրանամետ քաղաքականություն և հակադրվելով ԱՄՆ-ին՝ ամբողջովին հենվում է ՌԴ-ի վրա. «Ղարաբաղում պատերազմը ոչ թե հայերը, այլ ռուսները հաղթեցին Ադրբեջանին, այնպես, ինչպես մեր ողնաշարը կոտրեցին Աբխազիայում: Իսկ բացի այդ, ինչի է ընդունակ Հայաստանը, որ

---

[1] **«მთავარი გაზეთი»** («Մթավառի գազեթի» («Գլխավոր թերթ»)), N 4, 2002.

[2] Տես նույն տեղում:

[3] **«რეზონანსი»** («Ռեզոնանսի» («Ռեզոնանս»)), N 95, 2004.

պատերազմ է հայտարարում ԱՄՆ-ին. պարզ է, Երևանը Մոսկվայի հույսն ունի...», - եզրակացնում է Դ. Չուբինիձեն[1]:

Կրկին աշխարհաքաղաքական զարգացումներին անդրադառնալով՝ «Մթավառի գազեթի» պարբերականն անդրադառնում է նաև Ադրբեջանի շուրջ տեղի ունեցող իրադարձություններին: Քննարկման արժանացնելով Յալթայում տեղի ունեցած ԱՊՀ գագաթաժողովը՝ հոդվածագիր Իրինա Զուրաբիշվիլին անդրադառնում է Վ. Պուտին-Ի. Ալիև բավականին ջերմ հարաբերություններին և ենթադրում, որ «...միգուցե Ռուսաստանն անակնկալ է պատրաստել Ադրբեջանի ղեկավարության համար՝ ի դեմս Ղարաբաղի, ինչ խոսք, որոշակի փոխզիջման տեսքով: Ադրբեջանում կարծիք է տարածվում, որ շուտով ետ կվերադարձվի Հայաստանի կողմից օկուպացված ադրբեջանական մի քանի շրջաններ, որոնք գտնվում են Ղարաբաղի տարածքից դուրս»[2]: Ադրբեջանում նման կարծիքի հիմքեր, ըստ հեղինակի, տալիս են Ադրբեջանի շուրջ տեղի ունեցող նպաստավոր զարգացումները, որոնք նաև մեծ չափով կապված են ադրբեջանական նավթի հետ:

Հայ-վրացական պատմական մի շարք կնճռոտ հարցերին է անդրադառնում «Դիլիս գազեթի» թերթի հրապարակագիր Միխեիլ Ղուլոշվիլին, ով, Վրաստանի հանդեպ տարածքային ոտնձգություններ ունենալու համար «ավանդական» մեղադրանքներ ներկայացնելով հայկական շրջանակներին՝ կարծիք է հայտնում նաև Արցախի պատկանելության մասին. «Իսկ Ղարա-բաղը որտեղի՞ց է նրանց (հայերի – Վ.Ս.) հողը… ռուսների հետ պայմանագիր կնքելով՝ զավթեցին, հակառակ դեպքում ադրբեջանցիներն ու թուրքերը կհիշեցնեին 1915 թ. ցեղասպանությունը…»[3]: Հեղինակն այստեղ գծիկով է գործածել «Ղարաբաղ» անվանումը՝ «ყარა-ბაღი», հավանաբար փորձելով ընդգծել վերջինիս թուրքահունչ ձևը և ընթերցողի մոտ առավել տպավորիչ դարձնել Արցախի ադրբեջանապատկան լինելու մասին սեփական անհիմն համոզումը:

Արցախյան խնդրի մասին բավականին հավասարակշռված մտքեր են տեղ գտել «Ռեզոնանսի» թերթի մեկ այլ հրապարակման մեջ: Խոսքը վերաբերում է այնպիսի նուրբ հարցի, ինչպիսին միջազգային ատյաններում Վրաստանի՝ արցախյան խնդրի հանդեպ արտահայտած դիրքորոշումն է: 2004 թ. աշնանը Ադրբեջանը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի օրակարգ էր մտցրել «Իրավիճակը Ադրբեջանի օկուպացված տարածքներում» հարցը, որին ՄԱԿ-ի 191 պետություններից աջակցել էին 43-ը, 99-ը՝ ձեռնպահ են քվեարկել, իսկ 50-ը չեն մասնակցել քվեարկությանը: Թերթը փաստում է, որ Վրաստանը, ով վերջին տարիներին միջազգային ինստանցիաներում

---

[1] **«ახალი ერა»** («Ախալի էռա» («Նոր ժամանակաշրջան»)), N 42, 2003.

[2] **«მთავარი გაზეთი»** («Մթավառի գազեթի» («Գլխավոր թերթ»)), N 222, 2003.

[3] **«დილის გაზეთი»** («Դիլիս գազեթի» («Առավոտյան թերթ»)), N 34, 2003.

մշտապես աջակցել է Ադրբեջանին, այդ անգամ ձեռնպահ է մնացել[1]: Փոխարենը Ադրբեջանին աջակցել են իսլամական պետությունները, ինչպես նաև ԱՊՀ 6 երկրներ՝ Ուկրաինան, Մոլդովան, Թուրքմենիան, Ուզբեկստանը, Ղազախստանն ու Կիրգիզիան: Թերթը այդ առթիվ հրապարակել է նաև քաղաքագետ Ռամազ Սաղվարելիձեի կարծիքը. «Փաստ է, որ մինչև այսօր մենք ավելի կողմնորոշված էինք դեպի Ադրբեջանը: Իսկ ներկա պահին Թբիլիսին նախընտրում է հարավկովկասյան քաղաքականության բալանսավորումը: Մեր նպատակն է, որ իրար չընդհարվեն երկու հարևան երկրները: ՄԱԿ-ում ադրբեջանցիների նախաձեռնության նկատմամբ վրացական կողմի պասսիվությունը հակաադրբեջանական քայլ չէ, իսկ աջակցման դեպքում դա կլիներ որպես հակահայկական քայլ: Վրացական նման դիրքորոշումը բխում է բալանսավորված քաղաքականությունից», - եզրակացնում է Ռ. Սաղվարելիձեն[2]:

Պատմաբան-հոդվածագիր, իր բազմաթիվ հրապարակումներում ոչ հայանպաստ դիրքորոշումներով հայտնի Գիա Խևելին «Ջորջիան թայմսի» էջերում ծավալուն անդրադարձ է կատարում վրաց-ադրբեջանական բարեկամական հարաբերություններին՝ չշրջանցելով նաև կնճռոտ հարցերը: Խնդիրը, մասնավորապես, վերաբերվում է խորհրդային կարգերի օրոք Ադրբեջանին բռնակցված Սահինգիլոյի մարզին, որի մի շարք շրջաններում (աշխարհագրորեն Վրաստանի և ՌԴ-ի միջև գտնվող Բալականի (մինչև 1991 թ.՝ Բելոկանի), Զաքաթալայի և Կախի շրջաններ) ապրում են վրացախոս ինգիլոյները: Կատարելով պատմական էքսկուրս և Վրաստանից տարածքներ բռնազավթելու մեջ մեղադրելով հարևաններին, իսկ Սահինգիլոյի մարզը Ադրբեջանին նվիրելու համար՝ քարկոծելով վրաց կոմունիստներին՝ հոդվածագիրը հպանցիկ շոշափում է նաև արցախյան հիմնահարցը՝ ՀՀ-ին մեղադրելով Ադրբեջանից տարածքներ բռնազավթելու մեջ. «Բավականին մեծ հիմնադխնդրի դեմ է հայտնվել մեր բարեկամ Ադրբեջանը: Իր տարածքի համարյա երրորդ մասը զավթել է Հայաստանը: Հարցը կոնսերվասված է, և որոշում դեռևս չկա: Իսկ աշխարհը ճանաչում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը», - փաստում է Գ. Խևելին[3]: Հոդվածագիրը սրանով փորձել է ամեն կերպ ի ցույց դնել Ադրբեջանին չնեղացնելու իր ցանկությունները, քանի որ հոդվածի շարադրանքում առկա են Ադրբեջանի՝ Վրաստանին սահմանակից շրջաններում ապրող ինգիլոյների ազգային իրավունքների ոտնահարման մասին բազմաթիվ հիշատակումներ: Գ. Խևելին իր պատմական անդրադարձի մեջ նշում է նաև, որ հին Ատրպատականի տարածքում թուրքմենական տոհմերից ստեղծվեց նոր՝ ադրբեջանական ազգ, որոնց ձուլվեցին և ալբանացիները՝ յուրացնելով

---

[1] **«რეზონანსი»** («Ռեզոնանսի» («Ռեզոնանս»)), N 303, 2004.

[2] Տես նույն տեղում:

[3] **«ჯორჯიან თაიმსი»**, («Ջորջիան թայմս»), N 43, 2004.

հին Ալբանիայի, Շիրվանի տարածքները, ինչպես և Սահինգիլոն, Քռի ձախափնյա մեծ մասը:

Այսրկովկասի երեք երկրների փոխհարաբերություններին, կնճռոտ հարցերին և կովկասյան մեծ միության ստեղծման հնարավորություններին է անդրադառնում «Ջորջիան թայմս» թերթի գլխավոր խմբագիր Գիորգի Կապանաձեն: Հեղինակն իր վերլուծությունները կատարում է արդեն ավանդական դարձած հակառուսական տրամադրությունների հենքի վրա՝ Ռուսաստանին համարելով «կովկասյան թեժ պատերազմների» և «սև վիճակագրության» գլխավոր ճարտարապետը: Հոդվածագիրը Հայաստանը համարում է անհեռանկարային և փակուղում հայտնված երկիր, այն, իր որակմամբ, ավելի շատ «Ռուսաստանի խորդանոցն» է, քան պետություն, իսկ նախագահ Ռ. Քոչարյանը, ում Գ. Կապանաձեն անվանում է Մոսկվայի «ձեռքի տղա», համարվում է Ղարաբաղի պատերազմի «հերոս»[1]: «Ջորջիան թայմս»-ի գլխավոր խմբագիրը չափազանց բարդ է համարում Հայաստանի և Ադրբեջանի հարաբերությունները, որը մեծապես խանգարում կամ խոչընդոտում է կովկասյան մեծ կոալիցիայի ստեղծմանը: Հեղինակի կարծիքով վիճակն ինչ-որ չափով կարելի է շտկել, եթե հայերը և ադրբեջանցիները գնան փոխզիջման, օրինակ՝ այնպիսի լուծման, որ Ղարաբաղի մի մասը գտնվի Ադրբեջանի, մյուս մասը՝ Հայաստանի վերահսկողության ներքո: Գ. Կապանաձեի մեծ ցանկությունն է, որ Ռուսաստանն այլևս անելիք չունենա և դուրս մղվի տարածաշրջանից: Այդուհանդերձ, վրացի հոդվածագիրը փոխզիջումների առումով հույսեր չի կապում Ռ. Քոչարյանի հետ, քանի որ, հեղինակի կարծիքով, Ռ. Քոչարյանը, ի տարբերություն Մ. Սահակաշվիլու և Ի. Ալիևի, գիտի ինչ բան է պատերազմը, նա անձամբ է մասնակցել Ղարաբաղի պատերազմին, ավելին՝ նա Ռուսաստանի վասալն է: Գ. Կապանաձեն հույս է հայտնում, որ հետքոչարյանական Հայաստանն ավելի շուտ կընդունի փոխզիջումների տարբերակը, քան, կրկին հեղինակի եզրույթով ասված, «մարտիկ» («ბოევიკი») Քոչարյանը[2]:

2005թ. հոկտեմբերին Վրաստանի ադրբեջանաբնակ Գարդաբանի շրջանում Վրաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի նախագահները պաշտոնապես բացեցին Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը, մի իրադարձություն, որը շատերն անվանեցին դարակազմիկ: Նախագծի իրագործման, ինչպես նաև տարածաշրջանային զարգացումների մասին իր տեսակետները «Ախալի թառբա» թերթին է փոխանցել փորձագետ Գիորգի Խուխաշվիլին: Վերլուծելով նավթամուղի տնտեսական և քաղաքական ազդեցություններն ինչպես Վրաստանի, այնպես էլ տարածաշրջանի ու աշխարհի վրա՝ Գ. Խուխաշվիլին չի բացառում, որ նավթամուղի նախագիծը

---

[1] **«ჯორჯიან თაიმსი»**, («Ջորջիան թայմս»), N 19, 2005.

[2] Տես նույն տեղում:

կարող է նպաստել ընդհանուր կովկասյան անվտանգության համակարգի ստեղծմանը: Փորձագետը, բնականաբար, այստեղ հիշատակում է նաև ղարաբաղյան հակամարտության խնդիրը, որով պայմանավորված էլ, հնարավոր է, որ այս նախագծին սկզբից մաս կազմեն Վրաստանն ու Ադրբեջանը, հետագայում նաև՝ Հայաստանը[1]:

Վրացական պատկերացումներում արդեն կարծրացած «հայկական անջատողականության» թեմային է նվիրված ոչ անհայտ պատմաբան, Ավանդականների կուսակցության անդամ Գուբազ Սանիկիձեի ծավալուն հարցազրույցը վրացական «Ռա՞ո, ռաո՞» թերթին: Անդրադառնալով Ջավախքում տեղի ունեցող իրադարձություններին և դրանք որակելով որպես Վրաստանի դեմ ուղղված քայլեր՝ Գ. Սանիկիձեն, զուգահեռներ տանելով ջավախքյան նշյալ և անցյալում Արցախում տեղի ունեցած իրադարձությունների միջև, մասնավորապես նշում է հետևյալը. «Ջավախեթին Ղարաբաղ չէ. եթե Ջավախեթիում իրադարձությունները զարգանան Վրաստանի դեմ, ապա դա առիթ կծառայի Վրաստան-Ադրբեջան-Թուրքիա ալյանսի գործադրմանը, որի հետևանքը կլինի Հայաստանի կործանումը. այստեղ նրան այլևս չեն փրկի ոչ Ռուսաստանը, ոչ էլ Իրանը»[2]:

Պարզորոշ է, որ ջավախահայության շրջանում առկա պահանջները որակելով «անջատողական» նկրտումներ և այս համատեքստում հիշատակելով Արցախը կամ արցախյան իրադարձությունները՝ վրաց հասարակական-քաղաքական մտքի վերոնշյալ ներկայացուցիչներն ինքնաբերաբար, ուղղակի կամ անուղղակի կերպով արցախահայության ազգային-ազատագրական պայքարը ևս ներկայացնում են որպես «անջատողական», Ադրբեջանի պետականության կամ տարածքային ամբողջականության դեմ ուղղված քայլ, ճիշտ այնպես, ինչպես, ըստ վրացական տեսակետի, ժամանակին վարվել են աբխազներն ու օսերը:

ԱՐՑԱԽԻ ԽՆԴԻՐԸ ՎՐԱՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԸՆԿԱԼՄԱՄԲ (ԸՍՏ 1999-2009 ԹԹ. ՎՐԱՑԱԼԵԶՈՒ ՏՊԱԳԻՐ ՄԱՄՈՒԼԻ ՆՅՈՒԹԵՐԻ) մաս I

Վահե Դավիթի Սարգսյան
ՀՀ ԳԱԱ ՊԻ գիտաշխատող,
պատմության գիտությունների թեկնածու

Համառոտագիր

Հոդվածում ներկայացված են 1999-2009թթ. տպագիր հրատարակությունների նյութերը արցախյան հիմնահարցի վերաբերյալ,

[1] **«ახალი თაობა»** («Ախալի թաոբա» («Նոր սերունդ»)), N 284, 2005.
[2] **«რაო, რაო?»** («Ռաո, ռաո՞» («Ինչ, ի՞նչ»)), N 18, 2005.

որի մանրակրկիտ վերլուծությունը հայկական կողմին կտրամադրի էական փաստեր և լրացուցիչ հնարավորություններ՝ Վրաստանին վերաբերող քաղաքականության մշակման համար համագործակցության խորացման և փոխըմբռնման նպատակով: Աշխատանքի նպատակն է նաև խթանել հայ հասարակության իրազեկմանը հայերին և հայկական խնդիրներին վերաբերվող կարծրատիպերին, որոնք գոյություն ունեն հարևան երկրում՝ Վրաստանում, վրացական հասարակության տարբեր շերտերում:

Բանալի բառեր՝ Վրաստան, ՀՀ, վրաց հասարակական-քաղաքական միտք, տպագիր մամուլ, արցախյան հիմնահարց:

АРЦАХСКАЯ ПРОБЛЕМА В ВОСПРИЯТИИ ГРУЗИНСКОЙ ОБЩЕСТВЕННО – ПОЛИТИЧЕСКОЙ МЫСЛИ (НА ОСНОВЕ ГРУЗИНОЯЗЫЧНЫХ ПЕЧАТНЫХ МАТЕРИАЛОВ 1999-2009 гг.) часть I

Ваэ Давидович Саркисян
Научный сотрудник Института истории НАН РА,
кандидат исторических наук

Аннотация

В работе представлены материалы печатных изданий 1999-2009 гг. по Арцахской пробламитке, тщательный анализ которых предоставит армянской стороне весомые факты и дополнительные возможности для разработки политики в отношении Грузии с целью углубления сотрудничества и взаимопонимания. Целью работы является также способстовать ознакомлению армянского общества со стереотипами по отношению к армянам и армянским проблемам, которые царят в соседней стране – Грузии, в разных слоях грузинского общества.

Ключевые слова: Грузия, Республика Армения, грузинская общественно-политическая мысль, печатные СМИ, Арцахская проблема.

THE ARTSAKH CONFLICT ACCORDING TO THE GEORGIAN SOCIAL-POLITICAL PERCEPTION (DATE IS TAKEN FROM THE GEORGIAN PRINT MEDIA 1999-2009) Part 1

Vahe David Sarkisyan
Research Associate in the Institute of History of NAS RA,
Candidate of Historical Sciences

Abstract

The article presents the data about the Artsakh conflict published in the print media during 1999-2009, the closer examination of which will be undertaken to maintain and advance the Armenian-Georgian relations, as well as will provide a

better opportunity for the Armenian side. The process has an aim to introduce the Armenian society the stereotypes towards the Armenian nation about the Armenian national issues from the viewpoint of the different social ranks of the neighbouring countries.

Keywords: Georgia, Republic of Armenia, Georgian social-political concept, print media, Artsakh issue.